Հաստատում եմ՝ _____Մ.Արիստակեսյան
30.08.2022 թ. Մանկ.խորհրդի հ. 01 որոշում

Կոստան Զարյանի անվան հ. 117 հիմնական դպրոց ՊՈԱԿ

2022-2023 ուստարի
Ուսումնական խմբակ
«Ազգային տարազ»

Ղեկավարի՝ Ի. Բաբաջանյան

Ստուգված է՝ _____ Փոխտնօրեն Վ.Մուրադյան

«Ազգային տարազ» խմբակ

Բացատրագիր

Թերթում ենք մեր պատմության էջերը՝ տարազի միջոցով մեր սաներին ծանոթացնելու, ամրապնդելու հայկական մշակույթը։

Խմբակը նպատակ է հետապնդում ուսումնասիրել և ծանոթացնել մեր մշակույթի տարբեր փուլերին, տեղանքին և պատմությանը։

Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները, ցանկությունները և ձեռքերի շնորհքը՝ առաջացավ նման խմբակ ստեղծելու գաղափարը։

Մեր խնդիրն է սովորողին ծանոթացնել հայկական զարդարվեստի մոտիվներին, կտորի տեսակներին, զգեստի ձևի ընտրությանը, ասեղնագործությանը, ձեռագործությանը, կտորների տեսակներին, զարդերի ընտրությանը : Սովորողին ներկայացնել թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Արևելյան Հայաստանի տարազների տարբերությունները և ներկայացնել այն ամենը, ինչը ազգային է և կապ ունի մեր ժողովրդի մշակութային պատմության զարգացման տարբեր շրջափուլերի հետ։

Խմբակի պարապմունքները թույլ կտան սովորողներին ժամանակակից հագուստները ձևավորել ազգային տարազի տարրերով, որոնք կարտահայտվեն նախ էսքիզներով, ապա գործնական պարապմունքների ժամանակ կներկայացվեն հագուստները՝ իրենց իսկ ձեռքերով պատրաստված տիկնիկների միջոցով :

Ազգային տարազի պատմություն /22ժամ/
Նպատակ՝ Ծանոթացնել սովորողին հայկական մշակույթի մաս կազմող ազգային տարազի ստեղծման և տարածման պատմության տարբեր փուլերին։
Խնդիրներ՝ Սովորողին ներկայացնել ազգային տարազը՝ որպես ամբողջական համալիր, որը ներառում է ազգային խառնվածքը, հագ ու կապը, ազգային մտածոլակերպը և էթնոսի բնութագիրը
Վերջնարդյունք՝ Սովորողը պետք է կարողանա ներկայացնել ազգային տարազի կապը հայ ազգային մշակույթի, պատմության և տեղանքի հետ։
Բովանդակություն 1. Հայկական տարազների արտահայտման միջոցով ներկայացնել ազգային մշակույթը– 2 ժամ 2. Ազգային խառնվածքը, ազգային հագուստի տեսակները – 2 ժամ 3. Տարբեր սոցիալական, տարիքային, գեղագիտական, տոնածիսական շերտերի տարազներ – 2 ժամ 4. Ավանդական հագուստը՝ որպես ազգային էթնոսի բնութագիր – 2 ժամ 5. Տարազը՝ որպես հագուստի համալիր – 2 ժամ 6. Տարազի կապը ժողովրդի պատմության և տեղանքի հետ – 2 ժամ 7. Տարազի փոփոխությունը ժամանակի հետ – 2 ժամ 8. Մարդկանց սոցիալական դիրքի ու զբաղմունքի տարբերությունը՝ պայմանավորված տարազով /ըստ Փ. Բուզանդի/ - 2 ժամ 9. Ուրարտական ժամանակաշրջանի հագուստները - 2 ժամ 10. Այլ երկրների տարազներ 11. Այրարատի տարազախմբի տարբերությունը վրացականից - 2 ժամ 12. Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի տարազների տարբերությունը - 2 ժամ

Ազգային տարազի զարդամոտիվները / 24 ժամ/
Նպատակ՝ Ծանոթացնել սովորողին հայկական զարդանախշերի ձևի, գույնի, մոտիվներին
Խնդիրներ՝ Ներկայացնել սովորողին տարբեր ժամանակաշրջանների զարդաձևերի, տարբեր խավերի զգեստների, տարազախմբերի հետ:
Վերջնարդյունք՝ Սովորողը պետք է տիրապետի տարազի առանձին տարրերի կիրառության առանձնահատկություններին:
Բովանդակություն 1. Տարազի վրայի զարդամոտիվները /երկրաչափական, բուսական, կենդանական/ - 6 ժամ 2. Հայկական զարդանախշերի արմատները/գույն, ձև, էներգիա/ - 4 ժամ 3. Տարազի զարդանախշերի կապը արվեստի տարբեր ճյուղերի հետ – 4 ժամ 4. Գոգնոցը՝ որպես հայկական տարազի մաս - 4 ժամ 5. Պատմուճանը՝ որպես իշխանական խավի հագուստ – 2 ժամ 6. Տարազի զարդարման երկու եղանակները – 2 ժամ 7. Ասեղնագործության զարդաձևերը զգեստների վրա – 2 ժամ
Ասեղնագործությունը, ձեռագործությունը և մորթու կիրառությունը տարազների ձևավորման մեջ /36 ժամ/
Նպատակ՝ Ասեղնագործության և ձեռագործության միջոցով ընդլայնել սովորողի իմացությունը զարդանախշերի ստացման ձևերի մասին:
Խնդիրներ՝ Ծանոթացնել սովորողին հագուստի վրա մորթիների, մարգարիտների և լրացուցիչ զարդերի կիրառման տեխնիկային:

Վերջնարդյունք՝

Սովորողը պիտի կարողանա ձեռագործության և տարբեր զարդանախշերի միջոցով ձևավորի գոգնոցներ, գլխի հարդարանքներ, հագուստներ:

Բովանդակություն

1. Ասեղնագործ զարդանախշեր հագուստի վրա – 6 ժամ
2. Հագուստների վրա ձեռագործ զարդանախշերի առկայությունը - 4 ժամ
3. Գլխի հարդարանքների զարդարումը մարգարիտներով - 4 ժամ
4. Գլխի հարդարանքների զարդարումը ժանյակներով - 4 ժամ
5. Գլխի հարդարանքների զարդարումը ծաղկանախշերով - 4 ժամ
6. Ոսկով և արծաթով զարդարված գլխազարդեր, կրծքազարդեր, գոտկազարդեր - 4 ժամ
7. Լրացուցիչ զարդեր /ապարանջան, ականջող, մատանի, մանյակ, քունքակախիկ/ --6 ժամ
8. Մորթիների կիրառումը զգեստների վրա - 4 ժամ

Տոնածիսական զգեստներ /54 ժամ/

Նպատակ՝

Ընդլայնել սովորողի իմացությունը ազգային տարազի տարբեր աքսեսուարների կիրառման ձևերի պատմությանը՝ տարազը ամբողջական դարձնելու համար:

Խնդիրներ՝

Ծանոթացնել տոնածիսական, պարային, հարսանեկան և նորաձևության մեջ կիրառվող արդի նախշազարդերի հետ:

Վերջնարդյունք՝

Սովորողները պետք է կարողանան ներկայացնել իրենց կողմից գծած էսքիզներ և պատրաստել զգեստներ տիկնիկների համար

Բովանդակություն

1. Մազերի հարդարանք ծամթելով /տարազի լրացուցիչ մաս/ - 2 ժամ
2. Գլխի հարդարանքների նշանակությունը / կոպեկներ ու մարգարիտներ/ -4 ժամ
3. Գոտիների տեսակները /թելերով, կաշվով, կտորով/ -6 ժամ
4. Գոտիների դերը -2 ժամ
5. Տոնական զգեստներ, տեսանյութի դիտում -2 ժամ
6. Տղամարդկանց գլխարկներ, գուլպաներ և ոտնամաններ -2 ժամ
7. Մանկական տարազ - 4 ժամ
8. Հմայիլները՝ որպես պաշտպանիչ զարդ -2 ժամ

9. Հայկական հագուստի պահպանումը -2 ժամ
10. Պարային խմբերի զգեստների ձևավորում -6 ժամ
11. Հայակական տարազի նախշազարդերով ձևավորում -4 ժամ
12. Ավանդական պարերը հայակական տարազներով – 2 ժամ
13. Հարսանեկան տարազ -3 ժամ
14. Տոնածիսական տարազներ -4 ժամ
15. Նորաձևության և հայկական տարազի կապը -8 ժամ
16. Այցելություն Լուսիկ Ագուլեցու թանգարան -1 ժամ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.wikipedia.org
2. www.armgeo.am
3. www.armeniadiscovery.com
4. www.youtube.com – «Հայրենական տարազ»
5. www.hayagitaran.am
6. www.encyclopedia.am
7. www.newsarmenia.am

8.